ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի

կառավարման խորհրդի որոշում 2018թ. հունվարի 24-ի № 3 նիստի

ԿԱՐԳ

ՀՀ ԿԳՆ «ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Ղեկավարվելով ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ կառավարման խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստման կարգը

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի

նախագահ՝ Ա. Թ. Գրիգորյան

ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի որոշում 2020թ. հունվարի 13-ի

ԿԱՐԳ

ՀՀ ԿԳՄՄՆ «ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Ղեկավարվելով ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի «Դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստման» կարգը

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի

նախագահ՝ Ա. Գրիգորյան

Հաստատված է ՀՀ ԿԳՆ « Արարատի
պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի
մանկավարժական խորհրդի 2018թ.
հունվարի 8-ի N 4 նիստում
ՀՀ ԿԳՆ ԱՊՔ-ի մանկավարժական խորհրդի
նախագահ՝ Է. Գ. Գասպարյան

ԿԱՐԳ

ՀՀ ԿԳՆ «ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով կարգավորվում են ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ- ի դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստման գործընթացը:
2. Սույն կանոնակարգի ընդունման համար հիմք են՝ ՀՀ ԿԳՆ նախարարի 2014թ. հոկտեմբերի 29-ի № 1058-Ն հրամանը «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստման» կարգի մասին, ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությունը:
3. Սույն կանոնակարգը հաստատվում է ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհրդի կողմից:
4. Սույն կանոնակարգի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարվում են նույն կարգով:
5. Մանկավարժական աշխատողների վերապատրաստումը՝ նրանց մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների հետևողական կատարելագործման գործընթաց է:
6. Մանկավարժական աշխատողների վերապատրաստումն իրականացվում է ՀՀ կրթության և գիտության (այսուհետ՝ նախարարություն) «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ Մասնագիտական կրթություն և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի (ՄԿՈՒԶԱԿ) կողմից՝ (այսուհետ՝ վերապատրաստող կազմակերպություն) «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստման» կարգի համաձայն:
7. Համաձայն «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստման» կարգի՝ մանկավարժական աշխատողների վերապատրաստման

հետ կապված ծախսերը կատարվում են ՀՀ պետական բյուջեի, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

8. Մանկավարժական աշխատողների վերապատրաստման գործընթացի անմիջական պատասխանատուն վերապատրաստող կազմակերպությունն է:
9. Քոլեջի մանկավարժական աշխատողների վերապատրաստման նախապատրաստման գործընթացի պատասխանատուն քոլեջի տնօրենն է (այսուհետ՝ տնօրեն):
10. Վերապատրաստման ընթացքում մանկավարժական աշխատողը ազատվում է իր պաշտոնական պարտականությունների կատարումից՝ զբաղեցրած պաշտոնի, մանկավարժական աշխատանքի ստաժի և վարձատրության պահպանմամբ:

II ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

11. Քոլեջի մանկավարժական աշխատողների վերապատրաստումը պարտադիր է և անցկացվում է ըստ տնօրենի ներկայացրած հայտի:
12. Մանկավարժական աշխատողների յուրաքանչյուր անդամ առնվազն հինգ տարին մեկ անգամ ենթակա է վերապատրաստման:
13. Մանկավարժական աշխատողների վերապատրաստման դասընթացների անցկացման և տևողության ժամկետները սահմանում է նախարարությունը:
14. Տնօրենը, տվյալ տարվա մինչև հունվարի 30-ը ներառյալ, մանկավարժական աշխատողների 20%-ի անվանացանկը (զբաղեցրած պաշտոնը, կոնտակտային տվյալները) ներկայացնում է վերապատրաստող կազմակերպություն:
15. Տնօրենը վերապատրաստումը սկսելուց առնվազն տասն օր առաջ մանկավարժական աշխատողներին տեղեկացնում է վերապատրաստման ժամկետի և վայրի մասին:
16. Վերապատրաստման դասընթացի առնվազն երկու երրորդին մասնակցած մանկավարժական աշխատողին, դասընթացի ավարտից հետո, տասն աշխատանքային օրվա ընթացքում տրվում է վկայական:
17. Մանկավարժական աշխատողի վկայականը վավերական է նաև այլ ուսումնական հաստատություններում աշխատանքի անցնելու դեպքում: